

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԸ ՔՆՆԱԴԱՏ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՐԱՆ

1. Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Քննադատությունը կազմում է Արփիար Արփիարյանի (1851—1908)՝ ստեղծագործական ժառանգության անքակտելի մասը։ Նրա գործունեությունն արտացոլում է հայ գրական-հասարակական մտքի որոշակի ժամանակաշրջան, որի սկիզբը նշանավորվեց 80-ականների իրապաշտական շարժման գեղադիտական իմաստավորմամբ։ Սակայն 80-ականների շարժման ծրագրային տեսաբանն ու նրանց գործերի առաջին զնահատողը չմնաց արևմտահայ արձակի շրջադարձային փուլի սահմաններում։ Նրա քննադատության առարկան ընդլայնվել է հայ գրականության տարբեր շրջանների և համաշխարհային գրական երևույթների քննությամբ ու զնահատմամբ՝ նպատակամիտելով ազգային գրականության ինքնուրույն զարգացման ներկան ու հեռանկարային ուղենշումը։

Արփիարյան-գեղագետի քննադատական հայացքները բնորոշվում են կուլտուր-պատմական դպրոցի սկզբունքների ուրույն յուրացման դրսևորումներով։ Գրականության հարցերի արժարժումների նպատակամիտված ուղղվածությունը պատմական առաջընթացի և հասարակության վերափոխման ծրագրերում բացառում է վերացական իմաստասիրական քննությունները։ Ազգային գիտակցության, ինքնաճանաչողության, սոցիալական խնդիրների, ռեալիստական աշխարհաճանաչման ուղենշումները առաջադրվում և հաստատվում են ժամանակի իրականության որոշակի գործնական պահանջների ոգով։ Թերևս այս է պատճառը, որ ժամանակակիցներից ոմանք չեն ընկալում Արփիարյան-գեղագետի հայացքների փրկիսոփայական հիմքերը, նրանց անհերույթ է մնում «գրագետը», որն իր հախուռն բանավեճերում ու հոգվածներում ձգտում էր առավելագույն պարզությամբ ընթերցողին հասցնել իր տեսական կանխագծումները։ Քննադատի մասին ուղղագիծ պատկերացումը՝ գալիս էր նրա սկզբունքային դիրքորոշումից, որը միտումնավոր անհավանորդ կեցվածքով փորձում էր ջնջել ամեն սահման իր և ընթերցողի միջև¹։ Սվ պնդումներն այնքան արտաբերական անպաճույճ, երբեմն էլ պարզունակ երեվույթի տակ բացահայտվում է նրա հայացքների համակարգը, որ մշակվել էր և՛ հիմնավոր ուսումնառությամբ, և՛ հետագա հետևողական ինքնազարգացմամբ։

Նոր ուղղության՝ ռեալիզմի առանցքային խնդիրը քննադատը համարում էր «հանրությանն օգտակար ըլլալու» գաղափարը։ Արփիարյանի գեղարվեստական հայեցողության ինքնատիպ էությունը ճիշտ էր ընկալել Գրիգոր Զոհրապը՝ նրա մտքի միտումնավոր պարզեցված դրսևորումներում տեսնելով գրականության դեմոկրատացման սկզբունքի նպատակադրված իրացումը։ Քիր ժողովրդական զավկի, գրեթե շուկատ մարդու ձևերը կը սիրեմ,— գրում է նա։— Իր մշտնջենական պատիվը պիտի ըլլա մեր մեջ, իր օրվան կյանքերո-

¹ Իր բանավեճերից մեկում Արփիարյանը կես-հեգնական, կես-մարտահրավերի շեշտով նշում է, որ «Տանտեն, Պոսուեն, Լամենեն, Միքիկիլը, Հանրի Հայնեն, Տասթակսքին, Քիու-Նուան լինացին, Կեոթեն, Լիոյզ անգլիացին, Վոմդո գերմանացին, Պուլոեն, Դենը, Պոսուլեն, Ամիլը, ...որչափ ալ տգետ եմ, բայց այդ մատենագիրներեն մեկ քանին քիչ շատ ծանոթ են ինձի...» և ապա ավելացնում. «Հայոց մեջ ալ կը գտնվին մարդիկ, որք թեև ամեն օր իրենց գրչին ներքև հեղինակներ ու անուններ լին հեզհեզը՝ բայց կրնան քիչ շատ ընտելացած ըլլալ հին ու նոր մատենագրության, հետևարար իրենց ոսկեզօծած դեղահատին բուն արժեքը երևան հանել, առանց իրենց պես «գրագետ» ըլլալու» (Հայրենիք, 18. III. 1893)։

վը, առաջինը ինքը տանելը, մոտեցնելը գրականությունը ժողովրդին՝ փոխանակ ժողովուրդը բերելու անխախտ գրականության մի անմատչելի բարձունքին: Իրմով սկսած ու քաջալերված է միշտ այն երիտասարդ գրողներու շարքը, որ մեր հրապարակագրության այժմու ռամիկ, թե որ կուզեք, բայց հասկենալի ու սրտի մոտիկ հանգամանքը տված են»²:

«Գրականությունը տանել, մոտեցնել ժողովրդին» գրականության հասարակական դերի ճանաչման սկզբունքային այս հիմքի վրա է բարձրանում գեղարվեստի ու գրականության վերաբերյալ Արփիարյանի հայացքների ամբողջությունը: Գրականության հասարակական օգտակարության սկզբունքն այն չափանիշն է, որով արդարացվում է արվեստի վեհ կոչումը:

Այն ծրագրային նշանակություն է ձեռք բերում ազգային գրականության վերափոխման պահանջներում, որոնք իրենց առավել ամբողջական դրսևորումն են գտել «Րաֆֆի և հայ վիպասանություն» անդրանիկ հոդվածաշարում³: Րաֆֆին այն հեղինակն էր, որի գործի քննությունը լայն հնարավորություններ էր տալիս քննադատին արժարժեքի դրույթներ, որոնք ելակետային նշանակություն էին ձեռք բերում գրականության զարգացման հեռանկարում: Նոր ուղղության՝ իրապատության ուղեգծումները բարձրացվում են նախորդ գեղարվեստական փորձի գաղափարագեղարվեստական ամուր հիմքերի վրա:

1884 թ. «Արևելքի» էջերում հանդես գալով Գր. Չիլինկիրյանի «Ուղևորություն ի Պոլիս» գրքի գրադատականով, Արփիարյանը ի հայտ է բերում ուրույն կարծիքներ, որոնցով տարանջատվում է ժամանակի տիրող մտայնությունից: Պատահական չէր, որ քննադատն իր քննության առարկա է ընտրում նշված գիրքը, քանի որ Չիլինկիրյանը «Արևելյան մամուլի» ու նրա խմբագրի՝ Մ. Մամուրյանի հետ ակնհայտորեն հակադրվում էր նոր սերնդի գրական մտածողության սկզբունքներին: Որքան էլ տարօրինակ հնչի, 80-ականների օրգան «Արևելքը» նրանց կողմից որակվում էր իբրև «ռամկին անհպելի և ազնվական դասերու խորհրդակից»⁴: Ահա թե ինչու Արփիարյանը գրախոսականում շեշտը դնում է գրականության ժողովրդային բովանդակության և կյանքի ձանաչողության բուն տարբերակման վրա: Ըստ արժանվույն գնահատելով ռոմանտիկական ուղղության և դրա ներկայացուցչի՝ Գր. Չիլինկիրյանի վաստակը, քննադատը միաժամանակ գրողից պահանջում է ժամանակի հասարակական իրավիճակի արտացոլում՝ դիտված պատմական հայացքով, արդի հրատապ խնդիրների արժարժեքներով: Հեղինակի հայեցակետը իր միակողմանիությամբ չի բավարարում քննադատին. «Ո՛ր փիլիսոփայի մտքով, ո՛չ քաղաքագետի աչքով, ո՛չ տնտեսագետի խոհանոցով քննված չեն Պոլսո հայերը Պ. Չիլինկիրյանի կողմն»⁵, նրան պակասում է ժողովրդի կյանքի, Պոլսի բազմադեմ միջավայրի խոր ճանաչողությունը: Իսկ այդ ժողովուրդն ինքը «կյանքն է. ...ազգության սիրտը»: Արփիարյանը մեկ առ

² Գր. Չիլինկիրյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962, էջ 420:

³ Հոդվածաշարը հրապարակվել է «Մասիսում» (7. IX, 22. IX, 29. IX, 13. X, 1884), սակայն, ինչպես նշել է գրականագետ Գ. Ստեփանյանը, Արփիարյանը Րաֆֆու հետ նամակագրություն է ունեցել դեռևս 1881 թվականից: Հոդվածաշարի, ինչպես և Րաֆֆու մասին քննադատի մյուս ելույթների վերաբերյալ տե՛ս Լ. Գ. Մուրադյան, Րաֆֆի և Արփիարյան, Պատմա-քաղաքական հանդես, 1986, № 3, էջ 57—66:

⁴ Հետագայում կրկին անդրադառնալով «Արևելյան մամուլի» դիրքորոշմանը, Արփիարյանը ցավով է արձանագրում 60-ականների սերնդի նշանավոր ներկայացուցչի՝ Մ. Մամուրյանի հետ նոր գրողների գաղափարական տարածայնության փաստը: «Նոր հասած գրագետ երիտասարդությունը,—գրում է նա,—խորին հարգանք պետք է ողջունեք այն անունն, որ գրած էր «Սև լեռան մարդը» և սակայն ցրտությունը կը տիրե... Նոքա, որք արդեն մեծ ազդեցություն ունեցած էն ազգային գրականության վրա, նոքա իրենց ձեռքից մեծ գործունաց, խանդավառաբան կը կարոտին: Որքա՛ն սքանչելի տեսարան մը պիտի լինեք, եթե դրական նոր սերունդն իբր լուր հարապետն մեծարեք այն գործվալի գլուխն, որ «Սև լեռան մարդն» և «Հայկական նամականի» ծնած է» (Մասիս, 13. VI, 1887):

⁵ Արևելք, 26. VII. 1884:

մեկ թվում է նրանց, որոնք իրենց հավաքական ամբողջության մեջ միավորում են ազգության գաղափարը՝ ոսկերիչ ու նավավար, ժամագործ ու դերձակ, և որ կարևորն է դիտվում՝ «...պանդուխտներն: Անոնց վիճակն, անոնց կյանքը, թշվառություններն: Այդ տխրադեմ հայերուն և ոչ իսկ ճանապարհին հանդիպած է Պ. Չիլինկիրյան»⁶: Քննադատը գրողներին ի ցույց է դնում մինչև այդ մոռացության տրված այս խավերին, որոնց կյանքի հետազոտությունը պիտի դառնար նոր ուղղության առանցքային թեման:

Գրախոսությունը, սկզբունքային նոր կողմնորոշման արտահայտություն լինելով, իրապաշտության գրական քաղաքականության սկիզբն է նշանավորում: Այստեղ առաջադրվող պահանջները հիմնավորվում և գաղափարական հաստատուն դառնանք են դրսևորում նրա հաջորդ ելույթներում ու «Գրական և ազգային ծրագիր» հոդվածում⁷: Ուշագրավ է մի հանգամանք, որ շատ կողմնորոշ հատկանշական է Արփիարյան-քննադատի համար: Եվ Գր. Չիլինկիրյանը, և՛ Գր. Օտյանը արևմտահայ այն գործիչներն էին, որոնց մեծ հեղինակությունն ու ներդրումը գրական-հասարակական կյանքում Արփիարյանը գնահատում էր ըստ արժանվույն՝ պատմական հայացքով արժեքավորելով նրանց ծառայությունները ազգային առաջընթացում: Խնդրի մեկնաբանումը տարվում է երևույթի սկզբունքային բովանդակության բացահայտմամբ՝ վեր հանելով երկու տարբեր գեղարվեստական դիրքորոշումներ: Հակադրվում են հին և նոր պատկերացումները գրականության կոչման, բովանդակության զարգացման ուղիների մասին: Կետ առ կետ քննելով «պատրանքներով միշտ առլի» գ.ս.գետի Գր. Օտյանի հայացքները, Արփիարյանը հերքում է դրանք՝ առաջ քաշելով Եարդի վիպասանության՝ ծրագրային հարցադրումները: «Միխիթարությունը,—գրում է նա,—վերջին ապավենն է—անոնց, որոնք իրենց ցավներուն ալլես դարման չեն կրնար հուսալ: Իսկ արդի վիպասանությունը շուգբը վշտերու սփոփանք հայթայթելով միայն շատանալ, ալլ նաև՝ կետ նպատակին է աջակցիլ անոնց, որ ընկերական թշվառությանց դարմանները որոնելու հետամուտ են»⁸: Գրականությունը իր բարեշրջման նախ փուլում հավել էր մի աստիճանի, երբ ալլես անհնար էր շարձազանքել հասարակության խորրից բաժրացող ընդվզման տարբերքին, չտեսնել «տարաբնույթությանց նկարները» և «մինչև իսկ ժանտատեսիլ տեսարաններ»: Քննադատը գրականության «սուրբ պարտականությունն» է համարում «աշակերտիլ իրականության: Ինքալիստական պատկերման «կյանքը ինչպես որ է» սկզբունքը, որ Արփիար Արփիարյանը բերել էր դեռևս իր քրոնիկներից մեկում⁹, և որը դառնալու էր իրապաշտ 80-ականների ստեղծագործական նշանաբանը, չի մնում հայեցողական արտացոլման շրջանակում: Կյանքի բազմաձևության նկարագրությամբ քննադատը պայքարի եղանակներ է ուղենշում՝ գրականության կոչումը դիտելով «ազգային կյանքը իր ամբողջության մեջ» քննելու, ուսումնասիրելու գործը: Ահա թե ինչու այդ գրականությունը բնորոշվում է Արփիարյանի կողմից նաև որպես «ըմբոստացման գրականություն»¹⁰, իր մեջ ներառելով ոչ միայն իրականության ճշմարտացի պատկերման պահանջը, «ալլև բարձր նպատակ մը, ներգործել ընկերական կյանքի վրա, բարեփոխել զայն, ստեղծել նոր բարքեր, ներշնչել ուրիշ գաղափարներ»¹¹:

Բարձր գաղափարականությունը Արփիարյանը իբրև չափանիշ առաջադրում է նոր գրականության բոլոր ժանրերի համար՝ արձակ, թատերգություն, բանաստեղծություն և այլն: Ամենեին պատահական չէ և նրա հատուկ ուշադրությունը քնարերգության հանդեպ, քանի որ նախորդ ազգային գրթոնքի բանաստեղծական ուժգին արձագանքները մարում էին, և

⁶ Նույն տեղում:

⁷ Արևելք, 7. III. 1885: Տե՛ս նաև Լ. Հալեթի «Արքա Քոնսթանդինոս վեպի (Կ. Պոլիս, 1885)» առաջաբանը:

⁸ Արևելք, 7. III. 1885:

⁹ Արևելք, 16. X. 1884:

¹⁰ Արփիար Արփիարյան, Երկեր, Երևան, 1987, էջ 454:

¹¹ Մասիս, 1. IX. 1889:

թյունը. «Մեր եկեղեցականներն նարեկը ընդարձակորեն մեկնողներ գտնվել են. բայց ոչ ոք Չոպանյանի չափ բազմակողմանի նոր տեսությանց հորիդոններ պարզած է խորհող մտքերու առջև»¹⁸: Արփիարյանի գնահատման մեջ բացահայտվում է Չոպանյանի ուսումնասիրության առանցքային բովանդակությունը, սակայն հենց այդ խնդրում էլ իրապաշտության տեսաբանը հակադրվում է հետազոտողի տեսակետին: Արփիարյանը չի ընդունում նարեկացու ազդեցության անհրաժեշտությունը ներկայի գրականության համար: Նա մշտապես շարունակում է մի ներքին բանավեճ, ուր ժամանակի գրականությանն առաջադրվող հասարակական բովանդակության դրույթը առաջնայի նշանակություն է ձեռք բերում: Միայն կլինե՞ր կարծել, թե նրան անհայտ է նաև մտում գեղարվեստական մտքի ինքնին արժեքները: Արփիարյանի րանվեճը ժամանակի հրամայականով էր պայմանավորված, և նարեկացու հանճարը նրա տեսակետներում երբեք կասկածի չի ենթարկվում: Երկու տարի անց, 1897-ին նա գրում է. «Բան մը կա սակայն, որ չի փոխվիր... Նարեկացիդ: Կղզին նարեկացիդ վրա կը խոսեինք, հոս ալ նարեկացիդ ծանուցումը կը կարգամ: Այսպես ահա մեր կրոնական միջին դարն է, որ մեր ընդհանրացված պատմության մեջ միօրինակ շարունակություն կը դնեն»¹⁹: Մի այլ նամակում նա արդեն ավելի ուղղակի է արտահայտում իր դիրքորոշումը. «Միանգամ ընդմիջող շտկենք սխալ հասկացություն մը: Գեղարվեստական գրվածքներուն համար երբ դիտողություն կրննամ, աստիկա անոնց intrinsèque արժեքին համար չէ, այլ ժողովրդին հասկացողության տեսակետէն կը մըննդեն»²⁰:

Ինչպես գեղարվեստական գրականության գործնական իրացումներում, այնպես էլ քննադատության մեջ Արփիարյանի հայացքները տեղադրվում են մի ինքնատիպ համակարգում, որի գաղափարական ակունքները կարելի է գտնել Գր. Աթորունուց և նրանից առաջ Մ. Նալբանդյանից սերած գաղափարադեղադրական դրույթներում: Պեզիային հատկացվում էր որոշակի առաքելություն: «Ժողովուրդ մը,—գրում է քննադատը,—առանց ազգային երգի առանց ազգային բանաստեղծության ապալեր դաշտ մ' է առանց դալարեաց, առանց թռչնոց, ոչ մի սիրտ կհանգչի ի նմա. ժողովուրդ մը երգով կապո՞ւ»²¹: Այդ չափանիշով է նա անդրադառնում Սիմոն Ֆելքյանի երգերին²²: «Վազգեն երգարան» ժողովածուին²³:

Ժողովածուն, որ ընդգրկում էր անցյալ դարի 50-ական թվականներից մինչև դարավերջը ստեղծված հայ բանաստեղծության լավագույն նմուշները, քննադատի բնորոշմամբ ավերջին 50 տարիներու մեր ըղձանքները, մեր ձգտումները, մեր զգացումները, մեր մտածությունները աչքերնուս առջև կը

¹⁸ Հայրենիք, 15. V. 1895:

¹⁹ Ս. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Արփիար Արփիարյանի ֆոնդ, № 912:

²⁰ Նույն տեղում, № 914:

²¹ Մասիս, 30. V. 1887:

²² Ընդգծելով այդ երգերի հայրենասիրական հնչողությունն ու պայքարի ոգին, Արփիարյանը գրում է. «1890-ին, կ'երգեին Պոլսեցի երիտասարդները, կարմիր օրերու նախատոնակին ու զարիպները անոր արձագանք կուտային»:

Իմ հայրենյաց հեգի վարդան.

Հեծի տխրագին՝ իմ հողիս է ան.

Հոգիս՝ ողբույզ եղնի ղուբպան

Թե անոր բեկբեկ թելեր վշտավոր

մի ուրիշը՝ թե իմա հայրենյաց

Խոսին բարձրաձայն՝ իմ սրտիկն է ան.

քընար սգավոր,

Ավերման, կոտորածի, անարեկության օրերու մեջ, Ֆելքյան անսասան հավատացող մը եղավ իր ցեղին ապագային... ամեն բանաստեղծ տեսանող մըն է, երբ գաղափարի մը աչքերով կը դիտե Վազը» (Երևակ, 1905, № 5, էջ 365):

²³ Ժողովածուն լույս է տեսել Բոստոնում, 1902 թ., ի հիշատակ բանաստեղծ-հեղափոխական Տիգրան-Վազգեն Դերոյանի, որը զոհվել էր 1898-ին, 20 տարեկան հասակում (Հայ հանդես, Վենետիկ, 1. XI. 1902):

ցողացնեն²⁴։ Հատկանշական են Արփիարյանի դիտողությունները Պեշիկթաշըլյանի և Դուրյանի հրատարակությունների առթիվ։ Քննադատը սլարադիբ պահանջ է համարում հեղինակների բնագրերին հարազատ մնալը՝ անհանդուրժելի գտնելով նրանց «սրբագրումները» խմբագիրների կողմից։ Առանձին ուշադրություն է հրավիրվում ճանաչված գրողների գործերում թարգմանությունների կամ փոխագրությունների ճշտմանը²⁵։

Ժողովրդական ակունքներին գրականության մերձեցման խնդիրը քննադատն ընկալում է իբրև ազգային մշակույթի կարևոր բաղկացուցիչ մաս, Եվ այս հայեցակետից նրա կողմնորոշումը բանագետ հետազոտողների՝ Գ. Սրբվանձոյանի, Ղ. Ալիշանի, Խրիմյան Հայրիկի, գործունեության գնահատման հարցում ունի հասարակական ելակետ, որովհետև արժեքավորվում է ազգային-քաղաքական տեղաշարժերի գեղարվեստական ճանաչողությունը։

Կոմիտասի հանճարի, նրա ազգանվեր գործի բացահայտումը իր լիարժեք արտահայտություններն ունեցավ միայն դարասկզբին։ Եվ առավել բան ղրժվար է գերազնահատել 1892 թ. «Հայրենիքի» էջերում երևացած Արփիարյանի ոչ մեծ հոդվածի նշանակությունը, ուր առաջին անգամ հայ մամուլում հրապարակվում էր երիտասարդ սարկավազի՝ Սողոմոնի անունը²⁶։ Կարծում ենք, որ Կոմիտասի գործի պատմության ամբողջացման համար, բանասիրական բովանդակությունից բացի, հոդվածն առանձնանում է իր՝ Արփիարյանի ընկալման առումով, որին հասարակությանը մինչ այդ անհայտ Սողոմոն արկավազի գործունեությունը ներկայանում է իբրև հայ արվեստի զարգացման օրինաչափ երևույթ։ Ուշագրավը երիտասարդ երաժիշտ-բանահավաքի բացառիկ անհատականություն, նրա ազգանվեր գործի խորախորհուրդ հեռանկարայնությունն ըմբռնումն է։

Ժողովրդական բանավոր մշակույթի և նրա հետազոտողների հանդեպ գեղագիտական որոշակի վերաբերմունքը Արփիարյանի հայացքներում ոչ թե մասնակի հետաքրքրության արդյունք է, այլ «Ժողովրդական գրականության» նոր բովանդակությանը գաղափարամիտվող ծրագրի կենսագործման աշտա-հայտություններից մեկը։ Գավառի իրականությունը իր սոցիալական, մշակութային խնդիրներով մշտապես զբաղեցրել է Արփիարյանին և հրապարակախոսություն, և՛ քննադատության, և՛ գրականության ասպարեզներում։ Քրննադատը իր հոդվածներում բազմիցս վկայակոչում է այն օրինաչափ երեվույթը՝ թե ամեն ազգերու մեջ, ամեն հրապարակագիրներ ու վիպասաններ, որոնք անկեղծորեն իրենց ազգի բարգավաճման ըղձացող են, միշտ ուշումնասիրած են գավառացի, գյուղացի ժողովուրդներու կյանքը²⁷։ Այդ ծրագրով հասարակական հոգեբանությունից արմատախիլ էր արվում գավառի ու նրա ժողովրդի մասին նախապաշարված հայացքը, ցույց էր տրվում, որ այնտեղ են զարգանում ազգային կյանքի կենսունակ ծիլերը, այնտեղ է պահպանվում բուն ժողովրդական մտածողության տոհմիկ նկարագիրը։

Արփիարյանի սկզբունքներում առկա է գավառական գրականության հանդեպ ժամանակի հարցադրումների ուղղվածությունը, որը միաժամանակ կանխանշում է խնդրի իրագործման ընթացքում նոր մակարդակի ծրագրային բա-

²⁴ Նույն տեղում։

²⁵ Այս առթիվ ուշագրավ տեղեկություններ ենք գտնում Արփիարյանի՝ Միքայել Կյուրճյանին ուղղած նամակներում։ Խոսելով Պեշիկթաշլյանի որոշ գործերի հետքերով իր պրպտումների մասին, նա գրում է. «Երևակայե, որ շարաթներով բան կարգալեն հետո, միայն տուն մը գտա դեռ. «Ոհ, ինչ անուշին» իտալերեն 8—10 տողը։ Գյուտը հետաքրքրական է, բայց ավելի հետաքրքրականը ան պիտի ըլլա որ՝ արդյոք իտալացի բանաստեղծը առեր է Պեշիկթաշլյանեն, թե Պեշիկթաշլյանը՝ իտալացիեն։ Աս ալ հետաքրքրական է։ Իտալացին հայերեն գիտեր և թարգմանած է Պեշիկթաշլյան, Դուրյան... Արդ, իտալացի բանաստեղծին երկրորդ տեղագրությունը կա միայն, 1880-ին է, իսկ առաջին տպագրությունը ոչ մեկ գրատուն չկա։ Անդրը հոն պիտի լուծվի» (ԳԱԹ, Մ. Կյուրճյանի ֆոնդ, № 85 ք)։

²⁶ Հայրենիք, 21. XI. 1892։

²⁷ Հայրենիք, 16. X. 1891։

նաձևները: Դրանք զարգանալու էին Արտաշես Հարությունյանի «Վաղվան գրականության» հարցարանի, ապա «Մեհյան»-«Նավասարդի» «Հայաստանյայց գրականության» գեղագիտական կողմնորոշումների աստիճանական զարգացման հոլովություն: Գրականության մեթոդյա պատմարանի սահմանումով առաջադրվում է ազգային գրականության առաջընթացի տեսական հիմնավորման ուղույն հայացք՝ «գավառի գրականությունից», որն ինքնին նեղ ըմբռնում է, դեպի «Վաղվան գրականության» և «Վաղվան գրականությունից», որն ինքնին վերացական հասկացություն է, դեպի «Հայաստանյայց գրականության» հավաքական գաղափարը»²⁸:

Գավառական կյանքը գրականություն բերելու յուրատեսակ արտահայտություն էր Մեխրեն Կյուրճյանի (Հրանդ) «Պանդուխտի կյանքին» գեղարվեստական ակնարկների շարքը, որ սկսեց տպագրվել «Մասիսում» 1888 թ.: Արփիարյանը, որի մտահղացմամբ ձեռնարկվել էր շարքը, նոր թեմայի յուրացման կարևոր արժանիքն է համարում նրա հրատապ հասարակական հրաշտությունը. «Ընկերական իմաստասիրության խորհրդանշան մը» և «Արևմտյան հայոց 19-րդ դարու վերջին քառորդին գրական ու պատմական կյանքին հիշատակարաններն մին»²⁹:

Դեռևս «Արևելքին» աշխատակցելու տարիներին Արփիարյանը առաջադրում էր ծրագրային նախապատրաստություն գավառացի գրողների համար: Այնուհետև «Մասիսի», ապա և «Հայրենիքի» էջերում հետևողականորեն ներկայացվում և արժեքավորվում են գավառացի գրողների գործերը: «Օգտակար գրականություն» հոդվածը նույն «Հայրենիքի» էջերում տպված Կ. Փաշայանի «Վառու» վիպակի առթիվ, դուրս է գալիս մի գործի գնահատման սահմաններից՝ ի հայտ բերելով հեղինակի տեսակետները երևույթի մասին ընդհանրապես: «Այս փորձին»,—գրում է նա վիպակի մասին,—դուրս եկավ այնպիսի աշխատություն մը, որ բոլորովին կհամապատասխանե մեր առաջադրած գրական սեռին, որուն հառաջ բերելիք օգուտներուն վրա ավելորդ է ծանոթանալը»³⁰. Փաշայանի, Թլկատինցու գործերի կարևոր արժանիքը քննադատը համարում է նահապետական կյանքի, հատկապես կնոջ վիճակի, ավանդական պատկերացումները պսակազերծող հայացքը:

Թլկատինցու մասին գրախոսությամբ քննադատը, հաստատելով գավառի գրականության կենսունակ արժեքը, չի սահմանափակվում կյանքի հարազատ արտացոլման պահանջներով: Հանձինս Թլկատինցու, նա տեսնում է ահա հեղինակին, որի գրվածքներում կիրառություն են գտնում «մարդասիրական» բնորոշված ուղղության սկզբունքները: «Մեր մարդասիրական իրաւաշու գրականության առաջին հիմնաքարերը ասոնք են և իրենց նմանները. որոնց վրա կամաց-կամաց պիտի բարձրանա իմաստասիրական մատենագրությունը»³¹,—գրում է Արփիարյանը՝ Փաշայանին և Թլկատինցուն գնահատելով իբրև նախագնացներ:

Գրականության բարեշրջման ծրագրի սահմաններում օրինաչափ հետեւողականությամբ արժարժվում են նաև լեզվի հարցերը: «Լեզուն և գրականությունը նպատակ մը ունին»,—գրում է Արփիարյանը,—այդ նպատակն է ուսումնասիրել ազգի մը նյութական, հոգեկան և մտավորական պետքերն, և այդ պետքերուն գոհացում տալու աշխատիլ»³²,

Գրականության և լեզվական մշակույթի նոր շրջափուլում ժողովրդական ակունքների նպատակամիտվածության ելակետը հասարակական օգտակարության սկզբունքի իրագործումն էր: Հասարակական մտքի զարգացման համար անպայմանորեն գտնելով եվրոպական խոշոր գրողների, պատմաբան-

²⁸ Ս. Սարգսյան, Գեղարվեստական գրականության պատմականությունը, Երևան, 1979, էջ 361:

²⁹ Արփիար Արփիարյան, նշվ. աշխ., էջ 446, 451:

³⁰ Հայրենիք, 19. III. 1894:

³¹ Հայրենիք, 2. IV. 1894:

³² Մասիս, 1. VII. 1890:

ների, փիլիսոփաների գործերի աշխարհաբար թարգմանությունը, Արփիարյանը վճռականորեն առաջ է քաշում ինքնուրույն ազգային գրականության անհրաժեշտությունը. «Ազգային մատենագրությունը պետք է որ թափանցե ժողովրդին ամեն խավերուն, ամեն դասակարգերուն մեջ, ուսումնասիրե անոր սիրտը, միտքը, ավանդությունները, իմաստասիրությունը, պատմությունը, տնտեսական վիճակը, վերջապես այն ամեն բաները, որք միանալով կկազմեն ինչ որ կկոչվին «կյանք»³³, Առանձին նշանակություն է տրվում ժողովրդի լեզվական անսպառ բնահանքի՝ բարբառների ճիշտ զգտագործմանը, դրանց խնամքոտ, բազմակողմանի ուսումնասիրությանը. նվ սահմանվում, ձևակերպվում է սկզբունքների այն ամբողջությունը, որին պետք է հետևել գրական լեզվի բարեշրջման ուղղությունը. «Այդ կյանքի լեզուն իմաստասիրելով, ինչ որ տեղական է, ինչ որ ընդհանրական է՝ զանազանելով, իրարմե փոխառություններ ընելով, հին լեզուեն առաջնորդվելով, նոր բացատրություններ ի հարկին դարբենելով, պետք է շինվի մեր նոր մատենագրությունը»³⁴:

Ժողովրդական բովանդակության ազգային նկարագիրը գեղագիտական արժեքայնության չափանիշ է դառնում հոգևոր գործունեության տարբեր ոլորտների՝ թատրոնի, երաժշտության, գեղարվեստի, քննություններում, ժամանակակից արվեստի հարցերի արծարծումը հազվադեպ երևույթ էր դեռևս, և դա ոչ միայն այն պատճառով, որ չունեինք գեղարվեստի կյանքնադատություն բառիս մասնագիտական առումով, այլ նաև գեղարվեստի կյանքնինքը առիթներ քիչ էր տալիս դրա համար: Արփիարյանի հոգվածները կարևորվում են այդ իմաստով ևս, որովհետև որոշակի գործերի արժեքավորումից բացի, քննադատն անդրադառնում է խնդիրների, որոնք առնչվում են գեղարվեստի զարգացման, ուղղության, ժողովրդի գիտակցության գեղագիտական կողմնորոշման, ճշմարտացի արվեստի հասարակական բովանդակության հարցերին³⁵: Արվեստի ժողովրդայնության ձգտմանը զուգահեռ քննադատին մտահոգում է և գեղագիտական արժեքայնությունը, քանի որ, մտավոր ու բարոյական դաստիարակությունից զատ, համազգային մշակույթին հատկացվում է գեղեցկի կատարելության կոչումը: Իր նամակներից մեկում, խոսելով Հ. Առաքելյանի հանրամատչելի հրատարակությունների մասին, Արփիարյանը այդ առթիվ գրում է. «Արդյոք Ձեր հրատարակությանց շարքին մեջ պիտի ուզե՞ք էսթետիքին ալ իր բաժինը հանիլ: Ո՛րչափ հետ մնալինք այդ ճյուղին մեջ: Շատ փափագելի էր այդ ճյուղին մշակությունը: Մեր ժողովուրդը գեղարվեստասեր ընելու մեջ մեծ տկարություն կա»³⁶: Ինքը՝ Արփիարյանը, բազմազան առիթներով ձգտում էր լրացնել այդ բացը:

Հասարակական միևնույն նպատակին ծառայող արվեստի գործերի քննությունը Արփիարյանը ռեալիստական կերպավորման պահանջը ընդհանրացնում է որպես ժամանակի գեղագիտական մտածողության որակ ու չափանիշ: Քննադատի այս հոգվածների նշանակությունը մեծանում է գեղարվեստական երևույթների իմաստավորման ընդհանրացնող բովանդակությամբ՝ առատ նյութ տալով ռեալիզմի ազգային տիպաբանության որոշարկման համար: Դարավերջի ռեալիզմի համադրական բովանդակության սահմաններում ճշտվում է գրականության՝ իբրև գեղարվեստական մտածողության դոմինանտ ասպարեզի գաղափարագեղագիտական բնութագիրը:

Ռեալիզմի օբյեկտիվ էություն և կենսական գործառության ըմբռնումները Արփիարյանի հայացքներում ունեն սոցիալ-պատմական լայն հնչողու-

³³ Հայրենիք, 4. X. 1892:

³⁴ Նույն տեղում:

³⁵ Նյութի ծավալը մեզ հնարավորություն չի տալիս բերելու Արփիարյանի բազմաթիվ առանձին հոգվածները, որոնցից առանձնապես շահեկան են նկարիչներ Կարապետ Նշանյանին, Պետրոս Սրապյանին, Տորք Ջաքարյանին, երաժիշտ, բանաստեղծ Վահրամ Սվաճյանին, դերասան Գևորգ Զմշկյանին, ազգային թատերագրության ու եվրոպական արվեստին նվիրված ուշագրավ էջերը:

³⁶ ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, № 406:

թյուն: Քննադատի բնորոշումները սահմանում են գրականության մեջ կատարվող որակական անցման, սերնդափոխության բերած տեղաշարժերի բուն էությունը:

Գրականության և գիտության զարգացման օրինաչափությունների շոշափման հզորը հաճախ են ի հայտ գալիս Արփիարյանի դատողություններում իբրև ժամանակի նախանշաններ: Գրականության առաջընթացը ենթարկելով գիտության զարգացման սկզբունքներին, քննադատը պատմական հայացքով ընդգրկում է ժամանակաշրջանի բնորոշ մտածողության՝ պոզիտիվիզմի ներթափանցումները գեղարվեստական համակարգում: Իրականության ծավալային և որակական շարժումը XIX դ. վերջերին ցուցադրում է դրական գիտությունների և գեղարվեստական մտքի անժխտելի կապի գրսևորումները և այդ երևույթը արձանագրվել է Արփիարյանի կողմից իբրև գրական-պատմական հերթագայության արտահայտություն: «Ո՛չ մեկ դար,— գրում է նա,— այնքան շուալորեն արտադրած է վեպեր, որքան տասն և իններորդ դարու վերջին կեսը. և ո՛չ մեկ դար ալ այնքան պարծենցեր է, թե ինքը գրականության մարմնացումն է, որքան մեր այս վերջին դարը: Կա՛մ պետք է հայտարարել, թե վերացյալ գարու մը մեջ կապրինք, կամ պետք է խոստովանիլ, որ վիպասանությունը դրական գիտություն մ'է, և այնու միայն կարող եղած է այնքան բարգավաճում ստանալ դրական գարու մը մեջ: Զենք կարող առաջին հայտարարությունը ընել, ուրեմն հարինք վերջնուն»³⁷:

Գրականությանը հասարակական գիտակցության մյուս ձևերի հետ վերապահելով մտափոփոխ ընթացքի նկարագիրը, Արփիարյանը ցույց է տալիս այն պատճառները, որոնք առաջ են բերում տարամետ դիրքորոշումներ, «բաժանումներ», «մենք ու դուքի», հին ու նորի», «իրական դպրոցի», «իտեական դպրոցի» վեճեր: Գրական տեղաշարժերը նա դիտում է որպես գրականության զարգացման բնականոն, անխուսափելի արտահայտություններ, որոնք իրենց հերթին անհրաժեշտություն են դարձնում այդ «դպրոցների» էության տեսական գեղագիտական հիմնավորումը: Դրանցով են պայմանավորված քննադատի «Գրական դպրոցներ» և «Իրապաշտություն» հոդվածները, ուր պատասխաններ էին տրվում ժամանակի գրական կյանքի չրատապ «Չարցումներին»՝ հեղինակի տեսակետների հետ բացահայտելով գրական առաջընթացի նոր շափանիշները, ժամանակի տիրապետող ուղղության՝ իրապաշտության սկզբունքները:

Առաջադիմականի և պահպանողականի հակադիր գրսևորումների երևույթը Արփիարյանը ենթարկում է «գրական ընդհանուր օրենքի մը» գոյությանը, որը օրինաչափ է դարձնում հայ իրականության մեջ նույնի արտահայտությունները: Դրանք քննադատը տեղադրում է երկու դպրոցների՝ «մարդասիրական» և «եսասիրական» բաժանումներում՝ որոշարկելով դրանց աշխարհայացքային և ստեղծագործական անհատական տարբերությունները: «Ծնասիրական» և «մարդասիրական» դպրոցները տարանջատող հասկացության հիմքում քննադատը դեկլարվում էր առավելապես ստեղծագործական հոգեբանության սկզբունքով: Եվ այսուհանգերձ, գրականության այս ստորաբաժանումներում ուրվագծվում են իրապաշտության որոշարկումները: «Մարդասիրական» դպրոցի բացատրությունը ընդգրկում է կյանքի ուսումնասիրության, իրականության ճանաչողության և նրա վերափոխմանը նպատակամիտող գաղափարական ազդեցության գործոնը: Հատկանշականն այստեղ «հառաջդիմական ոգին» է, որ բոլոր ժամանակներում, տարբեր ուղղությունների գրողների համար դարձել է վերընթացի անհրաժեշտ պայման: Հանրային կյանքի բարեշրջմանը ձգտող գրականության օրինակները քննադատը տեսնում է և՛ դասական, և՛ ռոմանտիզմի արվեստի գործերում: Սակայն իրապաշտության գաղափարներին անհաղորդ են մնում ռոմանտիզմի հետևորդները. «Զուլայի մեջ Օտյանը կտեսներ քողամերկ բացատրություններ միայն, ու նողկանք կզգար ընկերական գարշությունները պարզող նկարագրություն»

ներհն, վասնզի չէր ըմբռնած, թե վիպասանությունը նաև ընկերական է ու այդ հիվանդանոցը, որ ընկերություն կը կոչվի, այցելող բժիշկը կարող չէ տեսած ախտերը ծածկել, զի անոնց դարմանին համար հարկ է հրապարակել զանոնք»³⁸։ Հենց այս կետում է, որ Արփիարյանը տարբերակում է ուղղութիւններին էությունը։ «Մարդասիրական» դպրոցի ներքին բաժանումներու նա զանազանում է «մտատիպարական» և «իրապաշտական» ուղղութիւնները, ուր արդեն որոշակիորեն սահմանազատվում են գեղարվեստական մտածողության հակադիր սկզբունքները։ «Իրապաշտություն» հոգվածում «մտատիպարական» կամ թե «խտեական» բնորոշմամբ որակելով ռոմանտիկական մեթոդի հետևորդներին, նա պարզում է ուղղության իմաստը բացահայտող ստեղծագործական առանձնահատկությունները։ «Մտատիպարական գրականության» նպատակն է «զբոսցնել ընթերցողը և միանգամայն կրթել ու ազնվացնել զնա, պարզելով անոր աչքին առջև այնպիսի տեսարաններ, որք կը գտնեն զգայարաններն հաճելի անուշութամբ։ Այդ դպրոցին հեղինակները կը ստեղծեն այնպիսի տիպարներ, որք կատարելապես գոյություն չունին կյանքի մեջ, բայց պիտի ըլլան հետևելու գեղեցիկ օրինակներ։ Ասոնց գրքերուն մեջ բարին կը հաղթի չարին, առաքինությունը պարզերես կ'ելլե, մոլությունը կը խայտառակվի»³⁹։

Ի տարբերություն ռոմանտիկական մեթոդի գրականություն-դպրոց մոդելի. Արփիարյանն իրապաշտական ուղղության աշխարհայացքային հիմքում կիրառում է գրականություն-կյանք գործառական կապի հանձնարարականը. «Իրապաշտական դպրոցը տարբեր ուղղություն ունի։ Այդ դպրոցի պատկանող հեղինակները կը մտածեն, թե մարդիկ տղա չեն, երեման անուշ լեզու ըլլալ, բարի օրինակներ ցույց տալ, մանկավարժական դրություն մըն է, որ կրնա օգտակար կերպով գործածվիլ դպրոցներուն մեջ, բայց ոչ կյանքի մեջ։ Ներկայացնել մարդկային ընկերությունը ճիշտ այնպես, ինչպես որ է, բարին՝ բարի, չարը՝ չար, ճշմարտությունը իր բոլոր մերկության մեջ երևան հանել, ահավասիկ իրապաշտական դպրոցի սկզբունքը»⁴⁰։ Ռեալիստական պատկերման ճշմարտացիությունը իր լայն ընդգրկումներով ներկայանում է իրրե արդյունավետ գործոն գրականության հասարակական առաքելության ծրագրերի կենսագործման ուղիներում։ «Իրապաշտական դպրոցը կյանքի, ընկերական իմաստասիրության, ամեն մարդասիրական ձեռնարկներու մաս կը կազմե և անոնց աջակիցն է»,— գրում է Արփիարյանը նույն հոգվածում։

Զուլայի, Դոդեի գործերի օրինակներով քննադատը երևան է հանում ռեալիզմի արվեստի հնարավորությունները, ուր գեղեցիկը հաստատվում է կյանքի բազմազանության համադրական պատկերմամբ՝ «իր դառն հեգնություններովը, հովվերգությամբը և սրտմաշուկ եղերերգությամբը»⁴¹։ Ռեալիզմի արվեստում գրականության հասարակական նշանակության հետ միասնաբար արժեքավորվում է դրա գեղարվեստականության մակարդակը։

Հերոսի տիպականացման ճանապարհին քննադատն ընդգծում է կերպաբանություն առկա հոգեբանական և սոցիալական այն գծերը, որոնք բնորոշ են ժամանակի իրականությանը։ Սակայն գեղարվեստականացման ընթացքում կադեոր է դիտվում օբյեկտիվ ընկալման պայմանը, որը գրողից պահանջում է կենսական փաստի անձուկ շրջանակներից ելնելու պատշաճ հեռավորություն։ Դրույթի տեսական հաստատման հիմք են ծառայում Շիրվանզադեի «Արսեն Դիմաքսյան», Գր. Արծրունու «Էվելինա», Տ. Կամսարականի «Վարժապետին աղջիկը» և մի շարք այլ գործեր։ «Ո՞վ է» հոգվածում քննադատն արդեն ընդհանրացնում է իր տեսակետները տիպականացման արվեստի մասին. «Վեպ գրողը, եթե իրավցնե կուզե գեղարվեստական,

38 Նոր կյանք, 1900, № 4, էջ 59։

39 Հայրենիք, 28. VII. 1891։

40 Նույն տեղում։

41 Հայրենիք, 15. V. 1894։

իմաստասիրական, բանաստեղծական աշխատություն մը ընել, պետք է քիչ մը վեր բարձրանա կյանքի եթերին մեջ ու անկե դիտե դեմքերը, սրտերը, միտքերը և ոչ թե իր ատելությունները, թշնամությունները իրեն ներշնչարան ընտրե՞ն⁴²։ Գրողի համար ստեղծագործական ազդակ է ոչ միայն կենսական փաստի ճանաչողությունը, այլև երևակայությամբ լայնացող գեղարվեստական ներշնչանքի ուժը։

Գրականության բարոյական բովանդակության ըմբռնումները գալիս են յրացնելու ռեալիզմի գեղագիտության առանձնահատկությունների ամբողջական նկարագիրը։ Արևմտահայ մամուլի էջերում բացված բանավեճը գրականության բարոյականության խնդրի շուրջը Արփիարյանին ներկայանում է ավելի լայն սահմաններում՝ իբրև հասարակական մտածողության նախապաշարումների և հանրային գիտակցությունը բնորոշող նոր ըմբռնումների բախման արտահայտություն։ Քննադատը բացահայտում է գրական երկի բարոյական ճշգրտման սկզբունքները. «Ո՛ր, բարոյականությունը բացատրություն մը ավելի կամ նվազ ըլլալու մեջ չէ, բարոյականությունը գրական մը հոգվուն մեջ է։ Մեր գրագետք, որ կ'ամբաստանվին, թե անբարոյական բաներ կը գրեն, մեր էն մեծ մարդասերներն են, ընկերական ցավերու համար վշտահար են, այդ ցավերու պատճառները կ'ուզեն բացատրել, թշվառներու վրա գթություն ու կարեկցություն հրավիրել»⁴³։

Քննադատության պատմության հետազոտողների կողմից բազմիցս ընդգծվել է Արփիարյանի աննախընթաց ներդրումը ազգի երկու հատվածների հոգևոր մերձեցման ու միավորման գործում։ Պատմաքաղաքական իրադրություն միմյանցից անջատված արևելահայ և արևմտահայ հասարակական կյանքի խնդիրները քննադատը դիտում էր իբրև համազգային միասնական կենսազարգացման օրինաչափ անհրաժեշտություն։ Նրա գործունեության այս ոլորտը հատկանշվում է գաղափարախոսական ուղենշային բովանդակությամբ, որի առանցքային իմաստը հայ ժողովրդի միասնության հեռանկարային իդեալի կենսագործումն էր։

Ազգային գրականության միասնական ընթացքի ընկալումն ու մերձեցման գործնական ձեռնարկումները ի հայտ են եկել հրապարակախոս քննադատի առաջին իսկ քայլերից՝ իբրև կայուն համոզումների արտահայտություն։ Թերևս արևմտահայ գրական գործիչներից ոչ-ոք այդպիսի լայն գործառնությամբ ու հետևողական շահախնդրությամբ չի իրականացրել համազգային գրականության ծրագրային առաջադրությունները, ինչպես Արփիարյանը։ Արևմտահայ մամուլում «Հրազդան», իսկ Թիֆլիսի «Մշակ»-ում «Հայկակ» ստորագրությամբ հոդվածները շուրջ 30 տարիների ընթացքում ձեռք են բերել յուրատեսակ գրական կամրջի խորհրդանշական բովանդակություն՝ լայն ճանաչում բերելով հեղինակին։ Գրական դիմանկարներ, գրախոսություններ, պրոբլեմային քննադատական հոդվածներ, քրոնիկներ ու առօրյա թղթակցություններ՝ գելիս են ծառայելու մի նպատակի, տարածել ու միմյանց ճանաչեցնել ազգային գրականության մշակներին։

Իրապաշտության կանխագծումներում նա ուսանելի է դիտում արևելահայ գրականությունը բնորոշող ժողովրդային բովանդակությունը. «Կարեկցություն թշվառներու տառապանքի, դարման անոնց ցավերու, այս է ոգին Արարատյան արդի մեր գրականության։ Պատկանյանց, Սունդուկյանց, Պռոշյանց ի վաղուց անտի, և արդ Մուրացան, Շիրվանզադե, Լեո և ուրիշներ, ընկերական ամեն խավերու ախտազնություն կ'ընեն և կը պատրաստեն հանդիսարան մը Արարատյան ու Կովկասյան հայոց զանազան դասերու վարքի, բարքի, զգացումի, գաղափարի, ցավերու և խնդության»⁴⁴։

⁴² Հայրենիք, 4. VIII. 1894։

⁴³ Հայրենիք, 12. IX. 1891։

⁴⁴ Մասիս, 1. IX. 1889։

Հասարակական նշանակությամբ բնութագրվող արևելահայ գեղարվեստական փորձի «անխոտոր ընթացքի» արմատները քննադատոր գտնում է Արտվանի, Նազարյանցի, Նալբանդյանի գաղափարական ուղղության հիմնավոր դրույթներում: Պատմականորեն պատճառակցելով երևույթի հասարակական նախադրյալները, Արփիարյանը դրանք իմաստավորում է ուսս գրականության փորձի յուրացմամբ:

Ռուսական կյանքի և մշակույթի ճանաչողության պահանջը Արփիարյանն առաջադրում էր ոչ իբրև մասնակի հարց: Նրա գաղափարագեղագիտական ծրագրերում ռուսական կողմնորոշումն ունի հասարակական հեռանկարային իմաստ. «Մեզի՝ Արևմտյան հայերու համար ալ ժամանակն է, որ հետամերտինք Ռուսիան ուսումնասիրել և զայն ամբողջապես ճանչնալ: Ռուսիո հայերն ուղղակի ռուսական ազդեցության ենթարկված են: Ռուսական գրականություն, ռուսական իմաստասիրություն՝ ամեն ինչ որ ռուսական է հզորապես կը ներգործե ռուսահպատակ հայոց վրա, անոնք ալ իրենց կարգին հզորապես կազդեն, կրնանք ըսել՝ «մահու և կենաց զորությամբ» կազդեն թրջահպատակ հայոց ճակատագրին վրա»⁴⁵:

Համագրային գրականության ընդհանրական առաջընթացի բանաձևումները Արփիարյանի քննադատական հայացքներում կայուն համակարգ են դրսևորում: Նույնիսկ հասարաքաղաքական ոչ նպաստավոր իրադրության պայմաններում, երբ թուրքական գրաքննական արգելքները անհնար էին դարձնում Ռուսաստանի և Արևելահայաստանի մասին որևէ հիշատակություն, Արփիարյանը միջոցներ է գտնում «Հայրենիքի» էջերում շարունակելու «Մասիս-Արևելքի» գրական միասնական քաղաքականությունը:

1892 թ. «Հայրենիքի» համարներում հաջորդաբար հրապարակված «Անոնք մեզ համար», «Մենք ալ անոնց համար» հոդվածների անհրաժեշտությունը պայմանավորված էր գրականության երկու հատվածների օբյեկտիվ գնահատման պահանջով: Արփիարյանի «կզբունքային կողմնորոշումն ակնհայտ է դառնում արդեն հոդվածների վերնագրերից, ուր դրսևորվում է փոխադարձ ըմբռնման և ժողովրդի միասնական շահերին գրականությունը ծառայեցնելու ձգտումը:

Կյանքի վերջին տարիներին, ամենաաննպաստ պայմաններում Արփիարյանը շարունակում էր գրական գործունեությունը՝ նպատակաուղղելով այն պատմական ընթացքի ընդհանրացման ու իմաստավորման փորձերին: Ստեղծել հասարակական մտքի պատմական ամբողջական պատկերը, նշանակում էր ամփոփել շուրջ կեսդարյա ազգային կյանքի հոգևոր արժեքները, պարզել դրանց նշանակությունը ժողովրդի վերածննդի առաջընթացում, և որ կարևորն է՝ կանխագծել հասարակական մտածողության ապագա ընթացքը՝ ստուգելով այն անցյալի ուղիների զարգացման տրամաբանությամբ: Այս սկզբունքի առավել ամբողջական արտահայտությունները դարձան 1902—1905 թթ. հրատարակված պատմաքննական ծավալուն ակնարկները, որոնք հետագայում ամփոփվեցին «Պատմություն ԺԹ դարու Թուրքիո հայոց գրականության» (Կահիրե, 1943) վերնագրի ներքո: Գրականություն-մշակույթ-ազգային հասարակական կյանք կապի օղակներում գրականության պատմաբանը գիտական համակարգման նոր մակարդակում առաջին անգամ ներկայացնում է արևմտահայ գրականության ամբողջական պատմությունը: Գիտական պարբերացումը, փաստերի համադրումն ու մեկնաբանումը, գրական շարժման առանձնահատկությունների պատմական ըմբռնումը ուսումնասիրության կարևորագույն արժանիքներն են:

Արևմտահայ հասարակական մտքի զարգացման ուղիների քննությունը՝ կուտակված գեղարվեստական փորձի գիտական ընդհանրացմամբ, պարզում է համազգային մշակույթի ինքնատիպ ուղղվածության, նրա ներքին բովանդակության ու աղբյուրների տրամաբանությունը: Չնայած գրականության հատվածային հետազոտության բնույթին, Արփիարյանը արևմտահայ

⁴⁵ Շիրակ, 1905, № 7, էջ 23:

գրականության ուսումնասիրությունը հետևողականորեն զուգորդում է համազգային գրական իրադարձությունների ընթացքին, միասնական հունում դիտարկելով գրապատմական կյանքի յուրահատկություններն ու զարգացման միտումները:

Իրրե շարժման անմիջական մասնակից, ականատես ու կազմակերպիչ, Արփիարյան-գրականության պատմաբանը արդեն տասնամյակների հեռավորությունից է ընկալում ու արժեքավորում 80-ականների շարժման բովանդակությունն ու գեղարվեստական սկզբունքները: Գրականության պատմաբանի մեծ արժանիքը ժամանակի հասարակական-գրական տեղաշարժերի, գեղարվեստական առաջադրույթների ոգու ըմբռնումն ու արտացոլումն է, ռեալիզմի մեթոդի անհրաժեշտության, նրա հաստատման գաղափարական նշանակության բացահայտումը: Գրականության անցյալն ու ներկան դառնում են երաշխիք՝ ակնկալելու նոր հայտնություններ: Արձանագրելով արևմտահայ իրականության ճգնաժամային շրջադարձերով պայմանավորված ամբողջական վայրէջքի պահերը, գրականության պատմաբանը լավատեսորեն սպասում է հոգևոր վերածննդի նոր զարթոնքին, որով մեծապես պայմանավորվում է հայ ժողովրդի գոյատևումը:

АРПИАР АРПИАРЯН—КРИТИК И ИСТОРИК ЛИТЕРАТУРЫ

Л. Г. МУРАДЯН

Р е з ю м е

Арпиар Арпиарян (1851—1908)— писатель, публицист, критик и историк литературы в своих многочисленных статьях, рецензиях стремился решить наиболее сложные и актуальные проблемы современной жизни и литературы. Основоположник реалистического направления в западноармянской литературе, Арпиарян своим творчеством способствовал осуществлению идейно-эстетических принципов армянских «восьмидесятников». Для Арпиаряна, поборника сближения духовной жизни Западной и Восточной Армении, популяризация и взаимоознакомление писателей двух ветвей армянской литературы приобретает важную идеологическую значимость. Критик и историк литературы в своих литературоведческих исследованиях охватывает разные периоды армянского и всеобщего литературного процесса, постоянно ориентируясь на самостоятельное развитие национальной литературы в настоящем и будущем.

ARPIAR ARPIARIAN—A CRITIC AND HISTORIAN OF LITERATURE

L. G. MURADIAN

S u m m a r y

Arpiar Arpiarian (1851—1908)—an author, public-affairs writer, critic and historian of literature, in his numerous articles and reviews strove to provide solutions to most of the complex and actual issues of contemporary literature and life. Founder of the realistic trend in the West-Armenian literature, Arpiarian and his creative work facilitated implementation ideological and aesthetic principles of Armenian intellectuals of the eighties. For Arpiarian, the partizan of integrating the spiritual life of Eastern and Western Armenia, popularization and intercommunication of the two branches of the Armenian literature acquires an important literary significance. The critic and historian of literature in his literary research covers diverse periods of the Armenian and total literary processes being at all times oriented towards independent development of the national literature, both contemporary and future.